



«ԳՈՐԾՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿՆ Է». ԿԱՐԵՆ  
ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ ՀԱՆԴՊԵԼ Է ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

27.09.2016



Վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորությամբ և բանկային համակարգի ներկայացուցիչների մասնակցությամբ կառավարությունում տեղի է ունեցել խորհրդակցություն:

Վարչապետը կարևորել է ոլորտի ներկայացուցիչների հետ հանդիպումը և ընդգծել, որ ակնկալում է գործնական, նաև ոչ ստանդարտ լուծումներ պարունակող առաջարկություններ, որոնց իրականացումը նոր թափ կհաղորդի բիզնես միջավայրի բարելավմանը և ներդրումների ներգրավմանը: «Մեր նպատակն է լսել խնդիրները, մարտահրավերները և սպասումները, որոնք ֆինանսական ու տնտեսական համակարգն ակնկալում է կառավարությունից: Մեր նպատակն է, որպեսզի բիզնեսը «շնչի», այդ տեսանկյունից ես ակնկալում եմ, որ դուք առաջարկներ ներկայացնեք, նշելով, թե ինչ կոնկրետ միջոցառումներ պետք է իրականացվեն՝ տնտեսության համար լրացուցիչ վարկավորում ապահովելու նպատակով: Գործնական լուծումներ առաջարկելու ժամանակն է», - նշել է Կարեն Կարապետյանը:

Իր հերթին, վարչապետն առաջարկել է բանկային համակարգի ներկայացուցիչներին՝ մշակել համապատասխան մեխանիզմներ բանկերում առկա ակտիվների միջոցով վարկավորելու փոքր և միջին բիզնեսը, այդպիսով նպաստելով տնտեսության տարբեր ճյուղերի ակտիվացմանը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանը ներկայացրել է դրամավարկային քաղաքականությունը, տնտեսության վարկավորման հետ կապված ընդհանուր իրավիճակը:

Ամփոփելով խորհրդակցությունը՝ վարչապետ Կարապետյանը հանձնարարել է կառավարության ֆինանսատնտեսական բլոկը ներկայացնող նախարարներին քննարկել ներկայացված առաջարկությունները և բանկային՝ համակարգի ներկայացուցիչների հետ շարունակել համատեղ աշխատանքը՝ բարձրացված խնդիրների լուծման և տնտեսության առանձին ոլորտներում տարբեր ծրագրերի իրականացման ուղղությամբ:



## ՎԱՐՉԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՂԱՄՆԵՐԻՆ

26.09.2016



Վարչապետ Կարեն Կարապետյանը ընդունել է Հանրային խորհրդի անդամներին՝ խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանի գլխավորությամբ:

Վարչապետը կարևորել է նման ձևաչափով հանդիպումները, որոնք հնարավորություն են տալիս քննարկել հանրությանը հուզող խնդիրները, մեր երկրի զարգացման հեռանկարները, հնարավոր մարտահրավերները և լուծման ուղիները:

Վազգեն Մանուկյանը Հանրային խորհրդի անունից շնորհավորել է Կարեն Կարապետյանին ՀՀ վարչապետի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ և մաղթել արդյունավետ աշխատանք:

Կառավարության ղեկավարը Հանրային խորհրդի անդամների հետ քննարկել է ՀՀ տնտեսության ներկայիս վիճակին, առկա խնդիրներին և զարգացման

ուղղություններին վերաբերող հարցերի լայն շրջանակ: Մասնավորապես, արծարծվել են տնտեսական քաղաքականությանը, կառավարման արդյունավետությանը, փոքր և միջին ձեռնարկատիրությանը, կրթությանը և գիտությանը, բանկային համակարգին և մի շարք այլ ոլորտներին առնչվող հարցեր: Ստքերի փոխանակության ընթացքում վարչապետին են ներկայացվել բարձրացված խնդիրների վերաբերյալ մի շարք առաջարկություններ:

Վարչապետը նշել է, որ նոր կառավարությունը, իր խնդիրները լուծելու ճանապարհին, հասարակությանը տեսնում է որպես գործընկեր, և այս տեսանկյունից Հանրային խորհուրդը խողովակներից մեկն է, որով գործադիրը հանրության հետ երկխոսություն է կառուցելու: Կառավարության ղեկավարն ընդգծել է, որ պետական ապարատը պատկերացնում է որպես ճկուն, գործող թիմ և այդ նպատակով ձեռնամուխ է եղել կառավարությունում կառուցվածքային փոփոխությունների գործընթացին: Վարչապետի խոսքով՝ այդ փոփոխությունները լուծ անվանափոխության խնդիր չեն լուծում, այլ ենթադրում են լուրջ բովանդակություն և նպատակային գործառույթներ:

Ամփոփելով քննարկումը՝ կառավարության ղեկավարն առաջարկել է Հանրային խորհրդի անդամներին ներկայացնել կոնկրետ առաջարկություններ և ծրագրեր՝ տեսանելի արդյունքների գնահատմամբ:



## ԱԿԲԱ-ԿՐԵՂԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿԸ ԳՈՐԾԱՐԿԵԼ Է GREEN ՎԱՐԿԱՏԵՍԱԿԸ

22.08.2016

«GREEN»  
ՎԱՐԿԵՐ

ԿԱՆԱԶԸ ՄԵՐ ԳՈՒՅՆՆ Է

Իրականացրե՛ք էներգաարդյունավետ  
ներդրումներ

 ACBA-CREDIT AGRICOLE BANK



Ակբա-Կրեղիտ Ագրիկոլ Բանկը ՓՄՁ-ների համար գործարկել է Green վարկատեսակը՝ ուղղված էներգաարդյունավետության և

էներգախնայողության բարձրացմանը:

Ինչպես տեղեկացրել են բանկում, գերմանական KfW բանկի կողմից իրականացվող համար» վարկային ծրագրի

«էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների


շրջանակում Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկի և ՀՀ Կենտրոնական բանկի միջև ստորագրվել է վարկային պայմանագիր, որով նախատեսվում է ՓՄՁ-ներին տրամադրել դրամային առևտրային և էքսպրես վարկեր՝ 11-13,8% տարեկան տոկոսադրույքով, 2-ից 5 տարի մարման ժամկետով և առավելագույնը 500 մլն դրամի չափով:

«Վարկավորումն ուղղված է Հայաստանի տնտեսությունում այլընտրանքային էներգետիկայի կիրառման զարգացմանն ու բիզնես գործընթացների արդյունավետության բարձրացմանը՝ թույլ տալով ՓՄՁ-ներին ներդրումներ կատարել էներգաարդյունավետ մեքենաների և սարքավորումների ձեռքբերման և ենթակառուցվածքների կայացման մեջ», - ասված է հաղորդագրությունում:



## ԱՐԱՐԱՏԲԱՆԿՆ ԱՐԺԱՆԱՅԵԼ Է COMMERZBANK-Ի ՄՐՑԱՆԱԿԻՆ

24.08.2016



Արարատբանկն արդեն 4-րդ անգամ գերմանական Commerzbank AG-ի կողմից արժանացել է Excellent STP Quality Award մրցանակին:

Մրցանակը բանկը ստացել է 2015 թվականի արդյունքներով SWIFT փոխանցումների բարձր՝ 100%-անոց որակ ապահովելու համար:

«Գործընկերներն այն որակել են նաև որպես Արարատբանկի հետ կայուն և արդյունավետ համագործակցության հավաստիք», - ասված է բանկի հաղորդագրության մեջ:



**MOODY'S-Ը ՅՈՒՆԻԲԱՆԿԻՆ ՇՆՈՐՀԵԼ Է B3 ՎԱՐԿԱՆԻՇ՝ ԴՐԱԿԱՆ  
ԿԱՆԽԱՏԵՍԱՄԲ**

25.08.2016



Moody's միջազգային վարկանիշային գործակալությունը հաստատել է հայաստանյան Յունիբանկի՝ դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների վարկանիշները B3 մակարդակում՝ կանխատեսումը կայունից դարձնելով դրական:

Գործակալության բնորոշմամբ՝ վարկանիշի դրական կանխատեսումը պայմանավորված է վերջին շրջանում Յունիբանկի կապիտալի դիրքերի ամրացմամբ, ինչպես նաև մինչև տարեվերջ կապիտալի հետագա ավելացման վերաբերյալ Moody's-ի սպասումներով:

«Վերջին 12 ամիսներին կապիտալի 3 համալրումներից հետո Յունիբանկը ծրագրում է հոկտեմբերին ներգրավել ևս 4 մլրդ դրամ, ինչը թույլ կտա նրան համապատասխանել ՀՀ Կենտրոնական բանկի՝ բանկերի նորմատիվային կապիտալի նվազագույն չափը 30 մլրդ դրամի հասցնելու նոր պահանջին: Յունիբանկի կապիտալը բաժնետոմսերի հուլիսյան տեղաբաշխումից հետո կազմում է շուրջ 25,5 մլրդ դրամ», - նշում է գործակալությունը:

Moody's-ը կանխատեսում է, որ 2016-ին բանկի նորմատիվային կապիտալը նախորդ տարվա համեմատ կաճի ավելի քան 50%-ով, ինչը կամրացնի նրա «անվտանգության բարձիկներն» ընդդեմ հնարավոր վարկային կորուստների:

**ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԸ ԴԱՐՁԵԼ Է KYC REGISTRY ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ԱՆԴԱՄ**

25.08.2016

Կոնվերս Բանկը դարձել է SWIFT-ի կողմից մշակված KYC Registry միջազգային համակարգի անդամ:



Ինչպես նշել են բանկում, համակարգը հնարավորություն է տալիս «Ճանաչիր հաճախորդիդ» (Know Your Customer) ընթացակարգի շրջանակում իրականացնել անհրաժեշտ տեղեկատվության անվտանգ փոխանակում թղթակից բանկերի միջև, ինչպես նաև դրա գնահատում և մոնիտորինգ:

«KYC Registry-ն ստանդարտացված տվյալների կենտրոնացված բազա է, որը բանկերին տալիս է տեղեկատվության պահպանման և օգտագործման հնարավորություն: Բանկերի տրամադրած տվյալները ստուգվում են SWIFT-ի կողմից, այնուհետև ներմուծվում համակարգ», - ասված է հաղորդագրությունում:

«KYC Registry-ին հնարավորություն է ընձեռում բանկերին ցուցադրել իրենց թափանցիկությունը և համապատասխանությունը «Ճանաչիր հաճախորդիդ» ընթացակարգի պահանջներին: Մեր մասնակիցների աճող ցուցակում Կոնվերս Բանկի ընդգրկվելը ցույց է տալիս համակարգի արժեքը թղթակցային բանկային համայնքում», - նշել է SWIFT համակարգի KYC Compliance Services ստորաբաժանման ղեկավար Բարտ Կլաեյսը:



## ԱՄԵՐԻԱԲԱՆԿՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է COMMERZBANK-Ի «ՈՐԱԿԻ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ» ՄՐՑԱՆԱԿԻ

29.08.2016



Գերմանական Commerzbank-ը 2015թ. արդյունքներով Ամերիաբանկին շնորհել է միջազգային գործարքների իրականացման «Որակի գերազանցության» մրցանակ՝ STP Award 2015:

Ինչպես նշել են բանկում, այս մրցանակը Commerzbank-ն ամեն տարի շնորհում է աշխարհի տարբեր երկրներում գտնվող լավագույն գործընկեր բանկերին՝ միջազգային գործարքների քանակական և որակական ամենաբարձր չափանիշների ապահովման համար:

Բանկում տեղեկացրել են, որ 2008-ից ի վեր Commerzbank-ի կողմից միջազգային փոխանցումների իրականացման բարձր որակի համար STP Award մրցանակն Ամերիաբանկին շնորհվում է արդեն 8-րդ անգամ:

## ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐԸ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

30.08.2016



Ֆրանսահայ բժիշկները՝ Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկի աջակցությամբ, բարեգործական ծրագրեր են իրականացրել Սյունիքի մարզի տարբեր գյուղերում և Սիսիանում:

Ինչպես նշել են բանկում, Ֆրանսահայ բժիշկների միության (UMAF) անդամներն ամեն տարի մայիսին ՀՀ

համայնքների դպրոցների բժիշկների հետ իրականացնում են փորձի փոխանակում՝ նրանց փոխանցելով երեխաների աչքի հետազոտման իրենց մեթոդների գաղտնիքները, իսկ օգոստոսին Հայաստան են բերում մեծ թվով օպտիկական ուսանյակներ, լաբորատոր և ակնաբուժական սարքավորումներ և տեղում ստուգում երեխաների տեսողությունը՝ անհրաժեշտության դեպքում նվիրելով ակնոցներ:

Հայաստան ժամանած UMAF-ի խմբի ղեկավար Լևոն Արթինյանը նշել է, որ ծրագիրն իրականացնում են արդեն 13 տարի՝ իրենց ներդրումն ունենալով հայ երեխաների առողջության պահպանության գործում:

Այս տարի ծրագրի շրջանակում Ֆրանսիայի հայ բժիշկները Սյունիքի մարզում հետազոտել են ավելի քան 500 երեխայի:

**ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿՆ ՈՒ BEELINE-Ը ԳՈՐԾԱՐԿԵԼ ԵՆ  
ՔՈՐԹԵՆԴԻՆԳԱՅԻՆ ՔԱՐՏ**

05.09.2016



ՎՏԲ-Հայաստան Բանկն ու Beeline-ը գործարկել են նոր համատեղ քարտ, որը կարագացնի ու կպարզեցնի վարկային գիծ ստանալու գործընթացը:

Ինչպես նշել են բանկում, համագործակցության շրջանակում Beeline-ի հավատարիմ բաժանորդները հնարավորություն կստանան ձևակերպել ՎՏԲ-Հայաստան Բանկի վարկային քարտերն առավել պարզեցված ընթացակարգով և մինչև 45 օր մարման արտոնյալ ժամանակահատվածով:

«Մենք ուրախ ենք համագործակցել Beeline-ի հետ և համոզված ենք, որ մեր տեխնոլոգիական և ֆինանսական հնարավորությունները թույլ կտան գործընկերոջ բաժանորդներին մասնակցել ծրագրին ավելի շահավետ պայմաններով: Beeline-ի հետ համատեղ քարտի թողարկումը ևս մեկ քայլ է վարկային գծի ձևակերպման գործընթացի հեշտացմանն ընդառաջ, որը տնտեսում է մեր հաճախորդների ժամանակը և ռեսուրսները», - նշել է ՎՏԲ-Հայաստան Բանկի Գլխավոր տնօրեն-Տնօրինության նախագահ Յուրի Գուսևը:

Բանկում տեղեկացրել են, որ ընկերությունների քոբրենդինգային քարտը կարող են ստանալ լավ վարկային պատմություն ունեցող՝ Beeline-ի հավատարիմ բաժանորդները:



**ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿԸ ԳՈՐԾԱՐԿԵԼ Է CALL BACK ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ**

06.09.2016



ՎՏԲ-Հայաստան Բանկը գործարկել է Call back ծառայությունը, որը հաճախորդներին հնարավորություն է ընձեռում բանկից հետադարձ զանգ պատվիրել: Բանկում նշել են, որ այս քայլը կոյուրացնի հաճախորդների հեռախոսային սպասարկման

գործընթացը և կբարձրացնի բանկի հետ հաղորդակցության հարմարավետությունը:

«Call back ծառայությունը հնարավորություն է ընձեռում հաճախորդներին խնայելու միջոցները բանկ զանգահարելու համար և պատվիրել զանգ բանկից՝ հաճախորդին հարմար ժամի՝ 09:30-19:30-ը՝ աշխատանքային օրերին և 10:00-17:00-ը՝ շաբաթ օրը: Ծառայությունը հնարավոր է պատվիրել ոչ միայն Հայաստանից, այլև արտերկրից», - ասված է հաղորդագրությունում:

**ՅՈՒՆԻԲԱՆԿԸ ԵՎ KfW-Ն ԳՈՐԾԱՐԿԵԼ ԵՆ «ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ» ՎԱՐԿԱՏԵՍԱԿԸ**

08.09.2016



Յունիբանկը՝ Գերմանահայկական հիմնադրամի և գերմանական KfW բանկի հետ համատեղ, սկսել է բիզնես վարկավորման նոր՝ «Էներգաարդյունավետ» ծրագիրը:

Ինչպես տեղեկացրել են բանկում, ծրագրին կարող են դիմել

արտադրության, առևտրի, շինարարության, գյուղատնտեսության, տրանսպորտի, զբոսաշրջության, ծառայությունների մատուցման և այլ ոլորտներում զբաղված անհատ ձեռներեցները կամ ընկերությունները:

«Ծրագրի մասնակիցները հնարավորություն ունեն ոչ միայն ստանալ բիզնես վարկեր շահավետ պայմաններով, այլև էապես կրճատել ձեռնարկության էներգածախսերը: Հաշվի առնելով շուկայի և բիզնեսի աշխատանքի առանձնահատկությունները՝ Յունիբանկը հաճախորդներին առաջարկում է վարկի մարման ճկուն և անհատական ժամանակացույց, իսկ վաղաժամկետ մարումը թույլատրվում է առանց սահմանափակումների», - ասված է հաղորդագրությունում:

Վարկը տրամադրվում է դրամով, տարեկան մինչև 14% տոկոսադրույքով, առավելագույնը 5 տարի ժամկետով և 1 մլն դրամից մինչև 500 մլն դրամի չափով: Վարկավորումն իրականացվում է անշարժ գույքի կամ ավտոտրանսպորտային միջոցի գրավադրամբ:

## ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿՆ ԱԶԲ-ԻՑ ՄԻՑԱՆԱԿ Է ՍՏԱՑԵԼ

13.09.2016



Հայէկոնոմբանկը Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակում կազմակերպված 2-րդ տարեկան մրցանակաբաշխությանն արժանացել է «Հայաստանում առաջատար գործընկեր բանկ» տիտղոսին:

Ինչպես նշել են բանկում, մրցանակաբաշխությունը տեղի է ունեցել Սինգապուրում սեպտեմբերի 6-9-ը կայացած Global Trade Review ամենամյա GTR Asia Trade և Treasury Week 2016 սեպտեմբերյան համաժողովի ընթացքում:

Մրցանակը Հայէկոնոմբանկի ներկայացուցչին շնորհել է ԱԶԲ Առևտրի ֆինանսավորման ղեկավար Սթիվեն Բեքը՝ ընդգծելով «բանկի ակտիվ մասնակցությունն ու արդյունավետ համագործակցությունը»:

## ԱՇՈՏ ՕՍԻՊԵԱՆԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ Է «ԳԱՐԵԳԻՆ ՆՇՂԵՀ» ՄԵԴԱԼՈՎ

14.09.2016



ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով Արարատքանկի վարչության նախագահ Աշոտ Օսիպյանին շնորհվել է ՀՀ զինված ուժերի «Գարեգին Նժդեհ» մեդալ:

Արարատքանկի ֆեյսբուքյան էջում տեղադրված հաղորդագրության համաձայն՝ այս պարգևին Աշոտ Օսիպյանն արժանացել է

հայկական բանակի կայացման և ամրապնդման գործում ունեցած ավանդի համար:

«Ինչպես ապրիլյան պատերազմի օրերին, այնպես էլ այժմ, որպես անհատ և որպես Արարատքանկի վարչության նախագահ՝ Աշոտ Օսիպյանը նախաձեռնել և ակտիվ մասնակցություն է ցուցաբերում բանակի և զինծառայողների ընտանիքների աջակցությանն ուղղված բազմաթիվ ծրագրերի», - նշել են բանկում:

- Ոմանց համար այդ պարգևատրումն անսպասելի էր, սակայն ոչ իմ և Ձեզ լավ ճանաչող անձանց համար, քանի որ մենք լավատեղյակ ենք, թե ինչպիսի ջանք և ներդրում եք ունեցել և ունենում մեր բանակի և, ընդհանրապես, երկրի կառուցման գործերում, - ասված է Աշոտ Օսիպյանին ՀԲՄ-ի նախագահ Սամվել Ջզմաչյանի շնորհավորական ուղերձում:

**ԴԻԼԻՋԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ**

19.09.2016



ՀՀ Կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնասեռազոտական

կենտրոնում սեպտեմբերի 15-16-ը տեղի է ունեցել կենտրոնական բանկերի մակրոտնտեսական մոդելավորման 19-րդ համաժողովը:

Ինչպես հայտնել են ԿԲ-ում, համաժողովը համախմբել է ավելի քան 120 մասնակցի: Դասախոսել են

Նորթվեսթերն համալսարանի պրոֆեսոր Լուրենս Քրիստիանոն, Ջոն Հովկինս համալսարանից՝ Քրիսթոֆեր Քերոլը, Ֆրանսիայի բանկից՝ Միշել Ժուլիարդը և Արժույթի միջազգային հիմնադրամից (ԱՄՀ)՝ Դուգլաս Լաքստոնը:

«Համաժողովի նպատակն էր քննարկել մակրոտնտեսական մոդելավորմանն առնչվող հարցեր, այդ թվում՝ ֆինանսական լարվածությունը դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդելավորման մեջ (DSGE), Դայնար (DYNARE) համակարգի վերջին զարգացումներին առնչվող հարցերը, մակրոպրոդեկցիալ քաղաքականությանն ուսումնասիրման համար մոդելների ստեղծման նոր հնարավորությունները», - ասված է ԿԲ հաղորդագրությունում:



**ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿԸ ԳՈՐԾԱՐԿԵԼ Է «ԱՐԱԳ ՄԻՋՈՑՆԵՐ» ՎԱՐԿԱՏԵՍԱԿԸ**

28.09.2016

Անելիք Բանկը գործարկել է «Արագ միջոցներ» վարկատեսակը, որը տրամադրվում է 150 հազ. դրամի չափով՝ 6 ամիս մարման ժամկետով, 24% տարեկան տոկոսադրույքով:



Ինչպես տեղեկացրել են բանկում, նոր վարկատեսակը վերականգնվող վարկային գիծ է, ինչը հնարավորություն է տալիս հաճախորդին յուրաքանչյուր 6 ամիսը մեկ երկարաձգել վարկի ժամկետը ևս 6 ամսով, բայց ոչ ավելի, քան 10 տարին:

«Եթե հարկավոր է շտապ գումար, օրինակ՝ վերանորոգման, բժշկական, ճամփորդական կամ այլ ծախսերը հոգալու կամ ապրանքներ ձեռք բերելու համար, ապա Անելիք Բանկը կօգնի իրականացնել ձեր ծրագրերը», - նշել է «Անելիք Բանկ» ՓԲԸ Հասարակության հետ կապերի պատասխանատու Աստղիկ Մարտիրոսյանը:



## ԿԱՅԱՅԵԼ Է ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԻ VIP ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ

30.09.2016



Հայբիզնեսբանկը ք. Երևան, Տերյան 69 հասցեում պաշտոնապես բացել է «Տերյան» մասնաճյուղը, որտեղ իրականացնում է բարձրակարգ VIP սպասարկում:

Բանկում նշել են, որ VIP մասնաճյուղը Հայբիզնեսբանկի 6-րդ տարածքային ստորաբաժանումն է Կենտրոն վարչական շրջանում: Մասնաճյուղում կատարվել է օրհնության կարգ, որից հետո

Հայբիզնեսբանկի վարչության նախագահ Արսեն Միքայելյանը և Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Արա Սադոյանը կատարել են պաշտոնական բացումը:

«VIP մասնաճյուղում ստեղծված են բարձր դասի հաճախորդների որակյալ և ապահով սպասարկման համար անհրաժեշտ բոլոր պայմանները. մասնաճյուղի առանձնացված մասնագիտացված սրահներում ապահովված է առավելագույն հարմարավետություն և անվտանգություն: Եկամտի բարձր մակարդակ և հատուկ կարգավիճակ ունեցող հաճախորդներին «Տերյան» մասնաճյուղն առաջարկում է բանկային ծառայությունների ամբողջական փաթեթ և անհատական ֆինանսական խորհրդատվություն՝ գործարար որոշումներում կողմնորոշվելու նպատակով», - նշված է հաղորդագրությունում:

«Արդեն օբյեկտիվ անհրաժեշտություն էր բարձրակարգ սպասարկում առաջարկող առանձին մասնաճյուղ ստեղծելու համար, քանի որ բարձր դասի հաճախորդների հետ գործարար կապերի ամրապնդումն ու զարգացումը առանձահատուկ նշանակություն ունի Հայբիզնեսբանկի համար: Բացի այդ, մենք փորձում ենք մրցակցային պայմաններից ելնելով՝ ընդառաջ գնալ նաև VIP հաճախորդների ցանկություններին՝ մատուցելով նրանց ժամանակակից, բարձրակարգ անհատական բանկային ծառայություններ», - ասել է Հայբիզնեսբանկի վարչության նախագահ Արսեն Միքայելյանը:


Միջոցառման վերջում Արսեն Միքայելյանը Հայաստանի բանկերի միության նախագահ Սամվել ճգմաչյանի կողմից պարգևատրվել է «Տիգրան Մեծ» ոսկյա հուշամեդալով՝ սեղմ ժամկետներում արագ և բարձր զարգացումներ ապահովելու համար:



**ՎԱՐՉԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է «ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ»-Ի ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ**  
30.09.2016

ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանն ընդունել է ֆրանսիական «Կրեդիտ Ագրիկոլ»-ի միջազգային մանրածախ և առևտրային ծառայությունների ղեկավար Մարկ Օպենհեյմի գլխավորած պատվիրակությանը:

«Մենք խնդիր ունենք բարելավելու բիզնես միջավայրը և այդ նպատակով որոշակիորեն փոխվել է նաև էկոնոմիկայի նախարարության



ուղղվածությունը, որի գլխավոր նպատակն է լինելու աջակցել գործարար հատվածին և ներդրումների իրականացմանը: Մեր թիմը միշտ բաց է լինելու և կանգնելու է ձեր կողքին՝ հնարավոր բոլոր խնդիրների լուծման ճանապարհին», - ասել է Կարեն Կարապետյանը՝ կարևորելով ֆրանսիական

կապիտալի ներհոսքի ավելացումը:

Կարեն Կարապետյանն ընդգծել է նաև ֆրանսիական ընկերության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության սերտ համագործակցության անհրաժեշտությունը և նշել, որ նախարարությունն առաջիկայում կմշակի ներդրումային ծրագրերի փաթեթ և կներկայացնի պոտենցիալ գործընկերներին: Վարչապետը համոզմունք է հայտնել, որ «Կրեդիտ Ագրիկոլ»-ը կնպաստի ֆրանսիական կապիտալի ներգրավմանը Հայաստանի տնտեսության մեջ և նշել, որ այդ հարցում ակնկալում է բեկումնային քայլեր:

Մարկ Օպենհեյմը հիշեցրել է, որ այսօր լրանում է «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ» բանկի՝ Հայաստանում գործունեության 20-ամյակը, և նրա խոսքով՝ այդ փաստն արտացոլում է երկկողմ ամուր կապերի մասին: «Պետության և ներդրողի միջև լավ հարաբերությունները հաջողության հիմնական գրավականներից են: Մի պետություն, որը պատրաստ է աջակցել գործարար դաշտին՝ կկարողանա հասնել տնտեսության զարգացմանն ու ապահովել առաջընթաց: Մենք այդ ճանապարհին կանգնած ենք ձեր կողքին և շահագրգռված ենք լինելու ֆրանսիական կապիտալի դեսպանը Հայաստանում», - ասել է Մարկ Օպենհեյմը:



ՎԱՐՉԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՎՏԲ 24 ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ ՄԻԽԱՅԻԼ ԶԱՂՈՐՆՈՎԻՆ

30.09.2016



Վարչապետը ողջունել է բանկի կողմից Հայաստանի ֆինանսական շուկայում իրականացվող ծրագրերը և ասել է, որ կառավարությունը հետևողական քայլեր է ձեռնարկում բարենպաստ բիզնես միջավայր ապահովելու ուղղությամբ:

Կարեն Կարապետյանը նշել է, որ կառուցվածքային փոփոխությունների

արդյունքում կառավարությունը՝ ի դեմս նոր Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, մտադիր է բիզնես հատվածի համար ստեղծել համապատասխան հարթակ՝ ներդրումային նոր ծրագրերի ներգրավման և իրականացման նպատակով:

Վարչապետը տեղեկացրել է, որ նախարարությունն առաջիկայում կմշակի ներդրումային ծրագրերի փաթեթ՝ արտաքին աշխարհին առաջարկելու համար:

Գնահատելով բանկի ղեկավարության պատրաստակամությունը՝ Հայաստանի գործարար դաշտում ներդրումային ծրագրերին աջակցելու հարցում, Կարեն Կարապետյանը նշել է նաև, որ անհրաժեշտ են համարժեք արձագանքներ բիզնես հատվածի ազդակներին:

Միխայիլ Զադորնովը նշել է, որ իր գլխավորած բանկն ունի բազմակողմ ծրագրեր և պատրաստվում է ընդլայնել գործունեությունը ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում:

Ընդգծելով բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծման կարևորությունը՝ ՎՏԲ 24 բանկի նախագահը համոզմունք է հայտնել, որ կառավարությունը տնտեսության ոլորտում կցուցաբերի ավելի ճկուն մոտեցումներ՝ համահունչ ներդրողների շահերին:

Միխայիլ Զադորնովն ընդգծել է, որ բանկը կդիտարկի նաև տնտեսության



առանձին ճյուղերում երկկողմ հետաքրքրություն ներկայացնող լրացուցիչ ծրագրերի իրականացման հնարավորությունը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միությունն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,
- նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ [uba@uba.am](mailto:uba@uba.am):